№ 2 ՓԵՏՐՒԱՐ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

ԱՂԲԻՒՐ № 2.

Աղբիւրի ալբոմ. *Զարամճիներ.* (պատկեր)։ *Օրօր.* (ոտանաւոր) Յ. Թ. Գայայեան։ *Աքաղաղը եւ կատուն.* (փոխադր.) Մ. Միսաքեանց։ *Լէօն—կայսր. Հայկական աւանդութիւն.* (շարունակ.) Սէյլան։ *Քեզի* (ոտանաւոր). օր. Ս. Փոյաճեան։ *Ատաղձագործը եւ ասեղնագործ աղջիկը* (պատմական անցք) Ֆուրմանից). Գ. Թումեան։ *Փոքրիկ ղերասանուհիներ* (պատկեր)։ *Կուռք* (Արևել. գրոյց). Ատրպետ։

Կենսագրական

Վոլֆգանգ Գեօթէ (կըշարունակւի). Նիկողայոս Տէր-Աւետիքեան։

Գիտական զբօսանք

Խցան «ինչպէս կամենաք» (նկարով). Գ. Բ.։

Զուարճալիք

Հանելուկներ. Ղ. եպ. Ձ.-ի։

Յայտարարութիւններ։

Խմբագրութիւնից

Աղբիւրի և *Տարազի* ներկայ թւականի պրէմիաները արդէն ուղարկւում են բաժանորդներին հերթով, մաս-մաս, որովհետև պոստային կանոններով իւրաքանչիւր №-ի հետ պէտք է ուղարկւի որոշ քանակութեամբ։

Յատուկ խնդրում ենք դպրոցների, գրադարան-ընթերցարանների, ժողովարանների և հասարակական հաստատութիւնների վարչութիւններից ի ցոյց դնել *Աղբիւրի* և *Տարազի* պրէմիաները։

Տարազի պրէմիան՝ *ՀԱՅՐԵՆԱՍԷՐ· ՓԻԳԵՆԻԱ* (Մայրական բախտ) *Աղբիւրի* բաժանորդները եթէ կամենան ստանալ՝ պէտք է վճարեն այդ պատկերի համար 3 ր., իսկ ոչ մեր բաժանորդների համար արժէ 5 ր.։

Հրաւիրում ենք մեր մշտական ընթերցողներին *Աղբիւր* և *Տարազ* տարածել իրանց շրջաններում։

Մեր թերթերին կարելի է բաժանորդ գրւել և ամսէ-ամիս վճարել բաժանորդագինը։

Չ ա ր ա ճ ճ ի ն ե ր

ԱՂԲԻՒՐԻ ալբում

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելուած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1898 Թ.

Օ Ր Օ Ր

Նեննի՛, պաճիկ,
Անուշ աղջիկ,
Հրեշտակներ
Քեզ բոլորեն·

Կա՜նուխ առատուն՝
Զըւարթ արթուն՝
Ե՛ր ձըվըլա՛
Դու նորէն։

Պուպրիկ քարտէս,
Թռչուն, պարտէզ,
Կըվայելես
Դուն առատ·
Թռչնիկ մալ դու,
Ծաղիկ մալ դու,

Կերգես, բուրես
Անապատ։

Վերջի՛ն պաչիկ
Եւ ա՛լ պաճիկ,
Քնացի մի՛նչեւ
Լոյս առաւօտ․
Թող քո կեանքին
Օրերն անգին
Սահին անվիշտ,
Զուարթուն։

Վիւրցեմբերգ․

Յ. Թ. ԴԱՅՍՅԵԱՆ

ԱՔԱՂԱՂԸ ԵՒ ԿԱՏՈՒՆ

(Փոխադրութիւն)

Աքաղաղն ու կատուն եղբայրացել ու շատ սիրով ապրում էին իրար հետ։

Կատուն միշտ գնում էր անտառ մկներ որսալու, իսկ աքաղաղին պատւիրում էր դուռ ու երդիկ փակել, երբէք բաց չանել — ու լուսամուտից էլ անգամ դուրս չընայել։

Կատուն գնաց անտառը։

Խորամանկ աղւէսն էլ հէնց դրան էր սպասում. տեղն ու տեղը լուսամուտին մօտեցաւ և սկսեց շատ քաղցր ձայնով երգել.

«Կուկրու կո՛ւ, աքլորիկ,
Ոսկէկատար Թուխթուշիկ,
Աղաւնուց էլ քնքուշիկ,
Դուրս նայիր լուսամուտից,
Հատիկներ կտանես ինձնից»։

Աքաղաղը ուզեց դուրս նայել, թէ ո՞վ է այդպէս քաղցր երգում—ու դուրս հանեց գլուխը. իսկ աղուէսը թըփ—թըրըըպպ... չափչտակեց ու հայդէ՜...

Փախցնում է աղուէսն աքաղաղին, իսկ աքաղաղը ճըւում է բոլոր ուժով.

«Գող աղուէսն ինձ փախցրեց,
Հեռու սարեր կըտանի,
Ձորերով ծուլ կ'անի.
Փիշօ՜, փիշօ՜, շուտ հասիր,
Ինձ սրա ձեռից փրկիր»...

Կատուն իր եղբայր—աքաղաղի ձայնը լըսելով, իսկոյն հասաւ աղուէսի ձեռից ազատեց ու տուն բերեց։

—Նայի՛ր, զգոյշ կաց, աքլորիկ, վաղը աւելի հեռու տեղ եմ գնալու, մի լսիր խորամանկ աղուէսին և լուսամուտից մի դուրս նայիր—եթէ ոչ նա քեզ կուտի ու մի ոսկորդ էլ չի թողնի։

Կատուն ասեց ու գնաց. աղուէսը նորից մօտեցաւ լուսամուտին և սկսեց երգել.

«Կուկրուկո՜ւ, աքլորիկ,
Ոսկէկատար թութուշիկ,
Աղանից էլ քնքուշիկ,
Դուրս նայիր լուսամուտից,
Հատիկներ կըտամ նորից»։

Աքաղաղը երկար ժամանակ վճռեց դուրս չընկնել, թէև շատ էր ցանկանում տեսնել թէ ի՞նչ հատիկներ են աղւէսի խոստացածը. աղւէսը տեսնելով, որ աքաղաղը ըսկի տէրը չի լինում, աւելի քաղցր ձայնով սկսեց երգել.

«Կուկրուկո՛ւ, աքլորիկ,
Ոսկէկատար թումթուշիկ,
Աղամնուց էլ քնքուշիկ,
Դուրս նայիր լուսամուտից,
Ահա սայլը անցկացաւ,
Ո՞վ պիտի ժողւի գետնից,
Այսքան ցորեն թափւեցաւ։

Աքաղաղի բերնի ջուրը գնաց. էլ չըհամբերեց ու իսկոյն գլուխը լուսամուտից դուրս հանեց. աղւէսը դրան էր սպասում—թըպպ—թրըպպ ու ծուլ էլաւ. նորից վախեցած ճւճւում է աքաղաղը.

«Գող աղւէսն ինձ փախցրեց,
Հեռու սարեր կըտանի,
Ձորերով ծուլ կ'անի.
Փիշո՛, ջան փիշո՛, հասիր,
Ինձ սրա ձեռից փրկիր»։

Կատուն հեռւից հազիւ հազ լսեց իրան ծանօթ ձայնը. իսկոյն հասաւ անխոհեմ աքաղաղին ազատեց ու տուն բերեց։

—Ի սէ՛ր Աստուծոյ, մի լսիր աղւէսին, վաղը ես շատ ու շատ հեռու տեղ եմ գնալու—եթէ բղաւես, ճղաւես էլ չեմ իմանալ—և դու կըկորչես ու յաւիտեան կըկորչես—նստիր և լուսամուտը երբէք բաց չանես: Կատուն գընաց.

Խորամանկ աղւէսը նորից մօտեցաւ լուսամուտին և սկսեց իր անուշ երգը.

«Կուկրուկո՜ւ, աքլորիկ,
Ոսկէկատար թուխթուշիկ,
Ադամնուց էլ քնքուշիկ,
Դուրս նայիր լուսամուտից,
Տես ցորենը չեղջերով
Դիզւած է քո պատի քով.
Հաւերն են ժողւում գետնից»:

Աքլորի սիրտն սկսեց թփրտալ. ուզում էր էնպէս աչքի տակով նայել այդ ցորենի չեղջերին, որ աղւէսն էր ասում: Բայց վախում էր և նստած տեղում ոստոստում: Աղւէսը նորից սկսեց երգել.

Աքլորը ներսից պատասխանեց.

—Էլ չես կարող խաբել քո ստերով—էլ երբէք դուրս չեմ նայի:

—Ուզում ես նայիր, ուզում ես ո՛չ—ես խաբելու կարիք չունիմ—մնաս բարով, պհա տունս եմ գնում. աղւէսը պատուհանից հեռացաւ ու պատի անկիւնում թագնւեց...

Աքաղաղը սկի ցորենի չեղջերը չէր մոռա-

նում. բացի այդ ուզեց դուրս նայել՝ թէ խորամանկը գնացե՞լ է, թէ ոչ ու դուրս նայեց.

Աղուէսը վրայ հասաւ, թըփ-թըրըպ ու ծուլ էյաւ...

Աքաղաղը բոլոր ուժով սկսեց սարսափած ճղաւել...

«Գող աղուէսն ինձ փախցրեց
Հեռու սարեր կըտանի,
Ջորերով ծուլ կ'անի.
Փիշօ ջան, փիշօ, հասիր,
Ինձ սրա ձեռից փրկիր»...

Որքան էլ ճւաց ու ճչաց—կատուն օգնութեան չեկաւ, որովհետև շատ հեռու էր գնացել:

Մ. Միսաքեանց

ԼԵՈՆ—ԿՌՅՍԲ

(Հայկական աւանդութիւն)

IV

Թօրէկ եղբայր,—այս անցքից մի քանի օր յետոյ՝ ասում էր վարդապետը Վրթնէի հօրը,—ես չունիմ այդպիսի մի ուրիշ աշակերտ. վերին աստիճանի ուսումնասէր, անդուլ գործող մանուկ է նա, սովորում է անհաւատալի արագութեամբ։

—Յովսէփ հայր,—պատասխանում էր Թօրէկը,—քո ասածին կրհաւատամ, ես ինքս էլ ուսման սիրահար եմ, շատ էի սիրում քո վարժապետ կարճիկ Մեսրոպին, յափշտակութեամբ լսում էի նրա վառվռուն, իմաստահոծ խօսքերը, և պահում էի մտքումս... ուրեմն պարզ է, որ ես անհասկացող չեմ, բայց՝ անբախտ մարդ եմ։ Երկու մեծ որդիքս Մեսրոպի մօտ էին սովորում. անպիտաններն ուսումը կիսկատար թողին, սուր ու վահան խլեցին՝ իշխան Վասակին ծառայելու համար Սասուն գնացին. իմ որդւոց բնական հակումն է զինակրութիւն։ Միւս չորսին էլ յանձնեցի զանազան վարդապետների, նոյնպէս ոչինչ չըսովորեցին, նրանք ևս թէև հողագործ, բայց՝ պատերազմի դաշտում մի մի վիշապներ են՝ ինչպէս ապացուցեցին վերջին պատերազմում... միթէ այդ եռանդալի փոքրը մարդ կըդառնայ, ո՞չ. նա բոլորից եռանդալի, խրոխտ զինուոր պիտի լինի քաջերի հրապարակում...

—Հաւատա՝ Թօրէկ, ասածդ չեմ ժխտում. գուցէ լաւ զինուոր, սակայն յայտնի գլխի տէր մարդ պիտի դառնայ։ Այն

չարաճճին, որ գիւղն իրար էր անցնում, այժմ մի հեզ գառն է դառել։ Նրա յանկարծական փոփոխութեան շարժառիթն հպարտութիւնն եղաւ, և այդ ազնիւ հպարտութիւնը նրան պիտի տայ իսկական բարձրութիւն։ Մի խնայիր նրան մագաղաթ, վարժութեան թերթեր, դու կ'ունենաս և՛ ուսեալ և՛ ազնիւ որդի։

—Հայր սուրբ, շատ մեծ գաղափար ունես դրա մասին։

—Երէկ, Թօրիկ, ես միւս սենեակ էի անցած, դռնից լըսում էի։ Մի տեսնէիր ինչ էր անում այն խեղճ Արամին, որ վիրաւորած էր նրան.—Արամ, դու ինձ յիմար գրեցիր,—ասում էր Վրթնէն,—դու ես յիմար եղել, որ ոչինչ չես իմանում, ոչ մի օր դասերդ չես սովորում, փոքր ժամանակից յետոյ՝ ես վրէժխնդիր պիտի լինիմ, իմ խեղճ ընկեր, գիտե՞ս, դասերդ սովորեցնելով կըլուծեմ վրէժս... —Տեսնո՞ւմ ես, Թօրիկ, սրանք ինչպիսի վեհանձն խօսքեր են։ Կրթենք այդ մանուկը, բարեկամ, կրթենք՝ մենք կըստանանք մի կորովի մարդ, և եթէ ապագայում զինուոր դառնայ, կարող է պիտանի և հասկացող լինել։

—Ես դէմ չեմ, հայր սուրբ, կրթենք, ես մագաղաթի գին և վարձ կըվճարեմ առատապէս, բայց ես ծածկեցի իմ կասկածը. ό, որչափ ցանկանում եմ՝ որ չընմանի եղբայրներին...

—Իմ բարի հայր,—ասաց Վրթնէ յանկարծ հօր ոտներն ընկնելով,—թո՛ղ Լուսաւորիչ վկայ լինի, որ ես պիտի սովորեմ... Ես այս անկիւնը կանգնած լսում էի քո և իմ պաշտելի վարժապետիս խօսակցութիւնը, երդուել եմ, ես պիտի ապացուցանեմ եղաբարոյ Արամի մօտ, որ ես նրա կարծածի հակառակն եմ։

—Ուրեմն, Վրթնէ,—մանուկի ճակատն համբուրելով հարցրեց հայրը,—ինչպէս երևում է, դու բարկացած ես ընկերիդ դէմ։

—Ամենևին, Աստուած չանէ, որ այդ տկարութիւնն ունենամ։

—Ուրեմն՝ չե՞ս ատում նրան:

—Ատե՞լ, ոչ, չէ՞ որ նա եղաւ պատճառ... Ցաւում եմ այդ խեղճ ընկերիս վրայ, որ մեծախօս է և գերագոյն տըխմար... որ չէ կարող իր խօսքն յարգել, չունի իր սրտում ոչինչ դոյգն ինչ պատւի զգացում...

—Դու վեհանձն, որդեակ,—յուզւելով Վրթնէին գրկեց Թօրիկը,—դու ստուգիւ լաւ մարդ պիտի լինես:

—Լաւ մարդ,—կրկնեց վարդապետը,—բայց հպարտ:

—Մարդն առանց հպարտութեան ինչ է արդեօք, հայր սուրբ,—պատասխանեց մանուկը,—եթէ հպարտութիւն անւանածդ ինձ ուսումնարան տարաւ, ո՜, կարծեմ շատ լաւ բան է:

—Այո՛, շատ լաւ, եթէ քո ոճով գործածւի...

V

Անցան օրեր, ամիսներ, Վրթնէն անյագ և սիրայօժար անձնատուր եղաւ ուսման: Այլ ևս նա չէր ստամբակ և դատարկապորտ. նա մի ծանրաբարոյ, ամօթխած, բայց ոչ երկչոտ մանուկ էր, սիրում էր ուսումով զբաղւել, սովորել ու սովորել: Նա երազին մէջ անգամ իր դասերի հետ էր, նրա մշտնջենական քաղցր և սիրելի մտածմունքն էր ուսմունքը: Նա շուտով Յովսէփ վարդապետի սիրելին դարձաւ: Արժանընտիր ուսուցիչն ոչինչ չէր խնայում. մանուկն աճելով ու զօրանալով ուսման անդաստանում, գերազանցեց իր բոլոր հասակակիցներին, իսկ ծոյլ ու անփոյթ Արամին՝ անյիշաչար ոգւով դասերն էր սովորեցնում, վերջինս էլ անպայման խոնարհում էր Վրթնէի հեղինակութեան առաջ:

Վրթնէի ուսումնարան գնալուց մի տարի յետոյ, էլի մի սիրուն երեկոյ՝ մանուկներն հաւաքւած էին հէնց նոյն պատի տակ, որի վրայ Արամ գրել էր... խօսում էին զանազան նիւթերի վրայ, իսկ Վրթնէն յափշտակութեամբ մի քանիսներին պատմում էր ազգային պատմութիւնից, որ սովորել էր իր հայրենանւէր ուսուցչից:

Մանուկ ունկնդիրներն հիանում էին ու գովաբանում նրա ճարտար լեզուն ու բնական տաղանդը...

—Վրթնէ ջան,—ի վերջոյ ասաց Արամը,—դու մեր վարժապետին հաւասար կարող ես պատմել ու խօսել, հիանալի մարդ պիտի լինես։

—Ո՛հ, Արամ,—պատասխանեց նա մի տեսակ ջղային սարսուռ զգալով,—ես յիմար և ստամբակ եմ։

—Ի՞նչ, ո՞վ է ասում...

—Այս անխօս պատը քո կողմից, վեր նայիր, շուրջ մի տարի առաջ ածուխով է գրած... բայց՝ հաւատարիմ է նա, պահել է սև արձանագրութիւնը։

Մանուկները խռնուեցան արձանագրութեան շուրջը։

«Վրթնէն յիմար է, Վրթնէն ստամբակ է». կարդացին նրանք։

—Օ՜,—հառաչեց Արամը յանկարծ անցեալն յիշելով,—այդ իմ գիրն է։

—Լրբութիւն է այդպէս գրել, ջնջե՛լ,—գոչեցին մանուկները,—չէ կարելի անարգել Վրթնէի պէս մի ազնիւ ընկեր, որի նմանը չունինք...

—Ո՛չ, մի՛ ջնջէք,—վճռաբար գլմադրեց Վրթնէ,—դա իմ պարծանքն է, այդ արձանագիրն ինձ մղեց Յովսէփ հայր սուրբի մօտ։ Զրպէտք է ջնջել, այլ պահպանել... իսկ դու, իմս Արամ, փոխանակ քո գրածից ամաչելու, աշխատիր դերազանցել ինձ, որպէս զի արդարացի նկատուի վարմունքդ։

—Օ՜,—դիտեց մի մանուկ,—դա կարող է անտիպար համարուել և ոչ քեզ մրցակից...

Արամը տխրութեամբ գլուխ կախեց։

VI

Չորս տարիներ սահեցին, Վրթնէ ուսումնարանում առաջին աշակերտ, ուսուցչի օգնական (խալֆայ) էր եղած, նա սովորում էր և սովորեցնում. կեանքից նրան ոչ մի պատկեր

չէր հետաքրքրում, միայն գրիչն ու գիտութիւնն յափշտակած էին մանուկ սիրտը... մագաղաթ թերթեր սպառւում էին եղէգ գրչի տակ, մաքուր օրինակւած վարժութեան թերթեր, թեթև գրքեր ծաւալւում էին խրճիթներում:

Վրթնէ թէպէտ տասն ու վեց տարեկան եղաւ, անելորդ էր այլևս ուսումնարան գնալը, քանի որ հէնց իր ուսուցիչը խորհուրդ կըտար Պօլին կամ Վաղարշապատ գնալ, կատարելագործել մայրենի լեզուն. բայց՝ քանի որ Թօրիկն արգելք էր լինում, պատանին շարունակում էր սովորածը կրկին սովորել, ուսման հետ ժամանակ անցկացնել:

Այդ միջոցում կրակապաշտներն յարձակւեցան Հայաստան, ամեն գիւղ ու քաղաք մունետիկներ ընկան, զէնքի հրաւիրեցին քաջ զինւորներին ու կամաւոր նահատակներին: Վրթնէ ցանկացաւ նաև քաջի անուն ժառանգել, ուստի իր մեծ եղբօր մօտ գնաց, մտաւ Խութի—Սասունի գնդի մէջ: Նա շուտ սովորեցաւ հեզարէն նիզակ ճօճել, սուր վարսել, վահանով մահաբեր հարւածներ վանել, ուստի ամբողջ մի տարի բանակի մէջ իբրև կորիճ, չարքաշ, հաւատարիմ զինւոր պատերազմելով, արժանացաւ Սեպուհ—իշխանի գրագիրը լինելու պատւին: Սակայն պատերազմը վերջանալուն պէս ստիպւեցաւ վերադառնալ գիւղ. աւա՜ղ, այնտեղ չըգտաւ իր պաշտօնած ուսուցչին, մեծարելի հոգևորականը կոչւած էր մի մեծ վիճակ կառավարելու և արժանացած էր եպիսկոպոսութեան վսեմ պատւին: Չըգտաւ իր լաւ ընկերներից և ոչ մէկին, ոմանք Մամիկոնեանների Ս. Ղազար (Առաքելոց վանք) յայտնի մենաստանն էին քաշւած յայտնի գիտնականների մօտ, ոմանք Աթէնք, Եգիպտոս, Բիւզանդիոն լչած, իսկ մեծ մասն արդէն սկսած էին զանազան պարապմունքներ ընտրել: Նա գիւղում միայն անգործ գտաւ իր հին ընկեր Արամին, որ դպրոցից դուրս գալով պարապ ման էր գալիս:

VII

Արամին մենք մասնաւորապէս ենք ճանաչում։ Նա մանկութեան ժամանակ ծոյլ, դանդաղ, դրսից խաղաղ բնաւորութեան տէր ու խելացի մանուկ էր երևում, սակայն հասակն առնելուց յետոյ՝ դարձաւ մի դաժան, կոպիտ, անամօթ օրինակ և ծածուկ աւազակ։ Այս էր նա Վրթնէի վերադարձին։

Երկու հակատիպ ընկերները մի քանի օր իրար հետ լաւ տեսնուեցան, որովհետև Վրթնէ սիրում էր դաշտերը շրջել, խօսել բնութեան սքանչելիքների, իր ստացած գիտական պաշարի մասին. Արամ առ երևութապէս ընկերացաւ նրան, սակայն՝ ի մեծ ցաւ Վրթնէի, ստէպ անպէտք և անհամ խօսակցութեամբ վատնում էին ժամեր։ Փոքր առ փոքր հիասթափւեցաւ Վրթնէ, նա յուռի գծեր էր նշմարում իր ընկերի ճակատին ու սրտին քանդակւած։

Վատ հակումներ նշմարելով Արամի հոգւոյն մէջ, աշխատում էր մի հիմնաւոր ապացոյց գտնել և իսպառ հեռանալ մանկութեան անուղղայ ընկերից, որ իր կրթութեան ու դաստիարակութեան շարժառիթն էր եղած։

Առիթն ինքնին ներկայացաւ մտերմութեան դիմակով։

Մի օր Վրթնէ, իր սովորութեան համեմատ, մի հատոր գրած թևին տակ, շտապում էր դաշտ գնալ, կարդալ առանձնութեան մէջ, ապա ինքն իրան համար տալ թէ ինչ նոր բան սովորեցաւ, երբ նկատեց Արամի շտապով իր ետևից գալը։

—Ա՜հ,—հառաչեց Վրթնէ,—էլի եկաւ խաթա-բալան, չըպիտի կարողանամ կարդալ... արդեօք ե՞րբ այս դատարկապորտ, անուղղայ ընկերից պիտի ազատւիմ... խե՜ղճ տղայ, ինքն եղաւ «յիմար և ստամբակ»։

—Ա՛յ մարդ,—ասաց Արամ հև ի հև նրա ետևից գրեթէ վազելով,—այնպէս արագ հեռանում, գնում ես՝ որ կարծես ետևէդ մոխրապաշտ պարսիկ է ընկել... Սպասիր, միասին երթանք։

—Գիւղը ձանձրալի է: Գատարկ խօսակիցներից էլ չեմ ախորժում: Ուստի խլում եմ մեր անմահ հեղինակներից մինի գործն, շտապում դաշտ:

—Էհ, Վրթնէ, միշտ ինչ ես հասկանում այդ հաստ գրքերից, չե՞ս ձանձրանում կարդալուց... Հա՛, մայրդ ասում է գիշերներն էլ ես կարդում:

—Այո՛:

—Զարմանալի ճգնաւոր դուրս պրծար, Վրթնէ:

—Բարեկամ, հոգին կրթելն ու զարգացնելը ճգնել չէ:

—Բա՛ ճգնաւորութիւն չէ, ինչ է... երբ քնանալ ուզեմ, վեր կառնեմ մի գիրք, կըջանամ կարդալ. ահա հատորն ընկնում է, ես էլ խոր քնով սկսում եմ խռմփացնել...

—Ո՛չ, ես քուն չունիմ... խիստ թեթև է քունս: Բայց, —մրմնջեց Վրթնէ տխուր ժպիտով,—ուսումնասէր Արամ, յիմար Վրթնէին, ստամբակ Վրթնէին, այժմ ինքդ ես ճգնաւոր ասում. որքան անկայուն է մարդկային բախտը, լոյսը խաւարում է, մեգը շամանդաղի փոխարկւում, մին բարձրանում, միւսն ելնում է հորիզոնից...

—Վրթնէ,—ասաց Արամ Վրթնէի միտքը չիմանալով,—դու վարդապետ լինելու արժանի ես, բարեկա՛մ, մի՛ նեղանար եթէ քեզ ճգնաւորի տիտղոս են տալիս...

—Իսկ դո՞ւ, դո՞ւ, Արամ, չես ասում թէ ինչ պիտի դառնաս. թռչան մանկութեան անհոգ օրերը, մռայլ ներկայի ետեւից սպառնացին պիտի ժամանէ անորոշ ապագան: Ուսում չունիս, արհեստ չունիս, հողագործութիւնից խոյս կըտաս, ուրեմն՝ դու, Արա՛մ, ասա ինձ համարձակ, դու ինչ պիտի դառնաս:

—Վրթնէ,—ժպտելով պատասխանեց Արամը,—ես արդէն որոշած էի դիմակազերծ երևալ և պատմել քեզ իմ ինչ լինելս...

Վրթնէ ուշադրութիւնը լարեց:

—Դու, շարունակեց Արամը,—հաւատարիմ և գաղտնա-

պահ ընկեր ես... Վրթնէ, կարելի է քեզ ամե՛ն բան ասել և պիտի ասեմ առանց անվստահութեան: Լսի՛ր, ես ու երկու ուրիշ հասակակից ընկերներ գտած ենք մի աներևոյթ, բայց փառաւոր գործ...

—Ի՞նչ գործ,— հետաքրքիր ընդհատեց պատանին,— այդ ի՞նչ բան է...

—Մենք գիշերները գիւղը ման կըգանք... դռների առաջ մոռացուած գրեր, մեղուատներից փեթակներ...

—Գողանո՞ւմ էք,—ընդհատեց Վրթնէ սարսափով:

—Ի՞նչ կայ որ՝ շատ դիւրին գործ է... Նաև երբեմն էլ յարձակւում ենք ոչխարների հօտերի վրայ... մի տեսնես ինչ փառաւոր խորոված ենք շինում: Դպրեվանից գինի, Առաղից խաղող և ուրիշ մրգեր կրելով՝ կանոնաւոր խրախճաններ ենք սարքում:

Վրթնէ կայծակահարի պէս անմռունչ արձանացաւ, յուզուած, ցաւած, քստմնած լսեց ապիրատ ընկերի պատմութիւնը:

—Դու, Արամ,—վերջապէս հարցրեց նա,—առանց խղճի խայթի գողանո՞ւմ ես:

—Խիղճն ի՞նչ է:

—Ափսո՜ս, հազար ափսոս,—շշնչեց պատանին զայրացած հրեշտակի դէմքով,—դու իմ մանկութեան ընկեր, դու իմ զարգացման պատճառ, դո՛ւ՝ անարատ Յովսէփի աշակերտ, դու այն հրեշտակակրօն մարդու շնչով ոռոգուած ծաղիկ, դու՝ Արամ, գող և աւազակ, ո՜չ... չեմ կարող հաւատալ, մի՞թէ այդքան չար ես, միթէ սուրբ ուսուցչիդ և ոչ մի խօսքը չէ դրոշմուած սրտիդ մէջ:

—Լսի՛ր, Վրթնէ,—ասաց անամօթ, անզգայ պատանին,— ես ճշմարիտն ասեցի քեզ... և տեսնում եմ, որ դու էլ անգործ ես...

—Առաջարկո՞ւմ ես քեզ ընկերանալ, ապիրա՛տ, սանձահարի՛ր վայրահաչ լեզուդ... Օ՜, մի՛ խօսիր, ես անընդունակ եմ քո արհեստին...

—Բայց... պատմում են՝ որ քաջ գինւոր ես եղել:

—Այո՛, ես քաջ զինւոր եմ, կռւել եմ հայրենիքիս համար…

—Ուրեմն էլ ինչ, վախենո՞ւմ ես մեզ ընկերանալուց։

—Արամ, անասնաբարոյ պատանի դու, ես քաջութիւնից ոչինչ զանց չեմ առել, ես սիրով կըմեռնեմ կռւի դաշտի մէջ քաջի անուն ժառանգելով, բայց… գողութի՞ւն, աղքատի պատուն յափշտակե՞լ, տներ կործանե՞լ… Երբէ՛ք, անմիտ դու։ Լսի՛ր, վերջին անգամ խորհուրդ կըտամ քեզ, խե՛ղճ տղայ, այդ չար ճանապարհից յետ դարձիր, դրա այլը դահճի տապարին առաջն է։ Դու, խեղճ ընկեր, դու երբեմն ինձ ստամբակ էիր ասում, այժմ իշխանական սամոյրի պէս ես հագնում աւազակի արիւնոտ և անարգ անունը… Հեռացի՛ր, Արամ, հեռացիր՝ խնդրում եմ, այդ անարգ արհեստից յետ դարձի՛ր՝ բարեկամ, ճակատի քրտինքով աշխատի՛ր քո հացն ու պահի՛ր անունդ անաղարտ…

Արամն առանց ամաչելու լսեց ընկերին և ծիծաղելով ասաց.

—Փառաւոր քարոզիչ ես, Վրթնէ՛, ափսոս որ ես չեմ կարող համոզւել։

—Ես իբրև ընկերդ, իբրև բարեկամդ վերջին անգամ խորհուրդ կըտամ, քանի դեռ ուշ չէ, քանի չէ խորացել վէրքը։

—Լաւ, Վրթնէ. այդ թո՛ղ մնայ, ինքդ ի՞նչ ես շինելու։

—Ե՞ս… Բիւզանդիոն կամ Ալէքսանդրիա պիտի երթամ։

—Եւ ի՞նչ շինելու…

—Աղքատ գլուխս հարստացնելու…

—Ես էլ, Վրթնէ, կերթամ փարթամ աւաններ դատարկ քսակս լցնելու։

Երկու ընկերները խորին սառնութեամբ բաժանւեցան։

Արամը արագ արագ վերադառնում էր գիւղ, Վրթնէ խորին տխրութեամբ, նայում էր նրա յետևից մտածելով:

—Ճակատագիրն է արդեօք, եթէ ոչ մեծաբանութեան պատիժ, սա ինձ յիմար և ստամբակ էր անուանում, ինքը տխմար, աւազակ դարձաւ, խօսքով վիրաւորեց ու բարձրացրեց ինձ, գործով ինքն իրան գլորում է, թշւառ գլուխն է կառ-կառում դահճի անագորոյն ցուրտ սալերին... Տէր, ազատիր դրան...

Սէյլան

(Կըշարունակւի)

Ք Ն Ձ Ի

Կըլլին նայւածք՝ մը…
Ու ալ չեմ ուզեր.
Անչա՛փ գոհ կըլլամ
Իմ այս վիճակէն.
Գիտեմ, չես հայիր
Ինծի անտարբեր—
Ա՛լ բաւ է, ոչի՛նչ
Չեմ ուզեր կեանքէն։

Թեւլազարի պէս
Կըլլամ, կըխնդամ,
Երբ ահեղ շանթ մը
Վրաս կընետես,
Ինծի՝ դժբախտիս
Երջանիկ կըզգամ
Ու կըխենդանամ
Մանուկի մը պէս…

ՕՐ. ՍԱԹԻՆԻԿ ՔՕՅԱՃԵԱՆ

ԱՏԱՂՁԱԳՈՐԾԸ ԵՒ ԱՍԵՂՆԵԳՈՐԾ ԱՂՋԻԿԸ

(Պատմական անգլ., Ֆուրմանից)

I

ԺՈԶԷՖԻՆԱ ԲՈԳԱՐԻ ԲԱԽՏԱՒՈՐ ՄԱՅՐԸ

Փարիզից երկու լիօ հեռաւորութեան վրայ գտնուող Կրուասսա գիւղում շատ համեստ կերպով ապրում էր մի կին իր երկու երեխաների հետ։

Այդ կինը դեռ ջահել էր։ Չընայած նրա երեսի վրայ դժբախտութիւններից առաջացած հետքերին, այնուամենայնիւ, նա դեռ ևս գեղեցիկ էր երեւում։ Նրա ամեն մի շարժուածքի մէջ արտայայտւում էր քնքշութիւն և ազնուութիւն։ Նրա երկու երեխաները, որոնց նա այնքան սիրում էր, իր քնքոյշ և անխոնջ հոգատարութեան առարկաներն էին համարւում։ Նա ինքն էր նրանց դաստիարակում—և այնպէս էր նրանց մասին հոգում, որ պառաւ և բարի դայեակին, նրա մօտ միակ ծառայողին, իսկապէս ոչինչ չէր մնում անելու։

Գիւղերում և փոքրիկ քաղաքներում, առ հասարակ, շատ

են սիրում հետաքրքրել ուրիշի գործերով, և այդ պատճառով էլ Կրուասսայի բոլոր բնակիչները շատ կարծիքներ էին անում երիտասարդ կնոջ և երկու գեղեցիկ երեխաների մասին և որ վերջիններս այնպէս լաւ դաստիարակուած, մաքուր և քաղաքավարի էին, որ, չընայած հետաքրքրող կանանց նախանձին, որ չէին կարողանում իմանալ այդ համեստ և սիրելի ընտանիքի գաղտնիքը, այնուամենայնիւ, նրանք վարւում էին նրանց հետ քաղցր և մինչև անգամ պատւում էին։

Խորհրդաւոր կնոջ որդուն, որը մեծն էր, Եւգենի էին կոչում, իսկ աղջկանը՝ Գօրտէնզիա։ Քոյր և եղբայր սիրում էին իրար այնպէս քնքոյշ, որպէս սիրում էին իրանց՝ մայրը և բարի դայեակը։ Նրանք քաղցր էին վարւում բոլոր բնակիչների հետ, բայց այնպէս համեստ և ծածկամիտ էին, որ ոչ ոք գիւղի մէջ ո՛չ մի բան նրանց անցեալի մասին չէր կարողանում իմանալ։

—Դա, ճիշտ որ, մի որ և է սնանկացած վաճառականի այրի է, ասում էին մի քանիսները։

—Էհ, չէ,—պատասխանում էին միւսները,—չէ կարող այդպէս լինել. նա նմանում է աւելի պատուաւոր մարդու կնոջ, քան վաճառականի։

—Ամենից ուղիղը նա է, որ դա մի որևէ ci devante է։

Այդ անունով էին կոչում Ֆրանսիայում յեղափոխութեան ժամանակ նշանաւոր կանանց, և որի մասին էլ վերաբերում է մեր այս պատմութիւնը։

—Ոչ,—շարունակում էին վիճել հետաքրքրողները,—եթէ նա ci-devante լինէր, չէր բնակւիլ մի այդպիսի աղքատ բնակարանում։

—Այդտեղ ինչ զարմանալու բան կայ։ Աղքատ բնակարանը, այնուամենայնիւ, լաւ է բանտերից, որոնց մէջ նրանց նըստեցնում են։

—Ենթադրենք թէ այդպէս է. բայց հաւատալի՞ է, որ ci-devant-ը իր որդուն վճռէ դարձնել հիւսնը, իսկ աղջ-

Փոքրիկ դերասանուհիներ

կանը՝ ասղնեգործ... Մի՛թէ թոյլ կըտայ իրան պատուաւոր կինը, աղջկանը քարշ գալ այծի յետեւից, որպէս մի հասարակ գեղջկուհի։ Է՛, չէ, նրանք բաւական հպարտ են լինում։

—Ի զո՛ւր էք դուք այդպէս ասում,—միջամտեց ծերունի Գիւպէրօնը, որը Կրուասսայի ատաղձագործն էր եւ որը գիւղում ամենապատուաւոր մարդն էր համարւում թէ իր շնորհալիութեան համար եւ թէ նոյնպէս նրա համար, որ նա ոչ մի ժամանակ չէր մասնակցել այդ ժամանակւայ պատահած անկարգութիւններին։ — Հաւատացէք ինձ, անւանիների մէջ էլ կան այնպիսիները, որոնք հասկանում են, որ ամենից հալալ հացի կտորը այն է, որ ձեռք է բերւած արդար աշխատանքով...

—Ճիշտ է, ճիշտ է, հա՛յր Գիւպէրօն։ Դուք ամեն ժամանակ պաշտպանում էք **անծանօթներին**, որովհետեւ ճանաչում էք նրանց, ասաց գիւղացիներից մէկը, բոլորովին բաւականացած իր խօսքերի հեգնօրէն լինելուց։ Յետոյ աւելացրեց. հա, հա՛յր Գիւպէրօն, դուք գիտէք բոլորը, որովհետեւ այդ անծանօթ կանայքը, այսինքն մատաղահաս կինը եւ նրա սեւահեր աղախինը, իրանց փոքր Եւգենիին ձեզ մօտ սովորելու են տւել. լա՛ւ հիւսն կըդառնայ այդ շէկ-գանգրահեր ազնուազարմը!

—Ի հա՛րկէ լաւ կըլինի, որովհետեւ, այդ շէկ-գանգրահեր ազնուազարմը, ինչպէս դուք անւանում էք նրան, այժմ իմ արհեստանոցում ամենալաւ աշակերտն է։ Նա իրան շատ վայելուչ է պահում եւ ես նրա մօտ եղած մի պակասութեան մասին միայն գիտեմ — որ ինձ անդադար հարցնում է.— «Է՛, ինչպէս է, տէ՛ր, շուտո՞վ կըսկսեմ ես փող աշխատել»։ — Տեսնենք, պատասխանում եմ ես նրան, եւ նա խորը հառաչում է։

Այս խօսակցութիւնից, սիրելի՛ բարեկամներ, դուք տեսնում էք, որ Կրուասսայի բնակիչները շատ էին հետաքրքրւում իմանալու՝ ո՛վքեր էին այդ անծանօթները, որոնք բնակութիւն էին հաստատել իրանց գիւղում։ Այդ օրինակ հետաքրքրութիւ-

նը բոլորովին ներելի է այն մարդկանց համար, որոնք վարում են հանգիստ և առանձնակեաց կեանք, և որտեղ փոքրիկ մի դէպքը, որ պատահում է նրան սահմանափակ շրջանում, մի մեծ և նշանաւոր անցք է թւում նրանց։

Մտնենք այժմ համեստ տնակը, ուր ապրում են մեր անծանօթները և լսենք նրանց խօսակցութիւնը, որից մենք, շատ կարելի է, կիմանանք այն գաղտնիքը, որ այնքան հետաքրքրում էր գիւղացիներին։

Պատուհանի մօտ կանգնած էր Եւգենին և գլուխը կռներին յենած՝ խորը մտածում էր։ Քիչ հեռու նրանից, նստած էր նրա քոյրը՝ ձեռագործը ձեռին։ Նա թողել էր գործը և քնքոյշ կերպով նայում էր եղբօր վրայ։

Նկատելով, որ եղբայրը մտածողութեան մէջ է, նա կամաց վեր կացաւ տեղից, ձեռագործը աթոռի վրայ դրեց, առանց շշուկի, մօտեցաւ եղբօրը, և գրկեց նրան մէկ ձեռքով։ Քրոջ քնքոյշ և սիրալիր շոյումը ցրւեցին Եւգենիի մտածմունքները։

—Ի՞նչ է քեզ պատահել, սիրելի՛ Եւգենի… Ասա՛. ինչո՞ւ համար ես դու այդպէս մտածման և տխրութեան մէջ ընկղմւած։

—Ոչինչ, սիրելի՛ Գորտէնզիա, ոչինչ…

Քրոջ իր հետ ունեցած սիրալիր վարմունքից զգացւած, Եւգենին գրկեց նրան և համբուրեց։ Յետոյ երեսը դարձրեց և խորը հառաչեց։

—Ահա տեսնո՞ւմ ես, դու կրկին հառաչեցիր, ասաց Գորտէնզիան։

—Չէ, ճշմարիտ, ոչինչ չըկայ…

—Սո՛ւտ ես ասում, Եւգենի, սուտ։ Քեզ մի ինչ որ գաղտնիք ունիս և դու նրան ինձնից թագցնում ես։ Մի՞թէ այդ լաւ է։ Քեզ ունիս ծածուկ բաներ, որոնք թագցնում ես քրոջի՜ցդ, որը, քե՛զ այնպէս սիրում է… Ո՛հ, ինչպէս այդ վատ է։

Երիտասարդ աղջիկը հեռացաւ եղբօր մօտից և սկսեց իր գործին կենալ։

—Սիրելի՛ Գորտէնզիա, ինչո՞ւ համար պիտի քեզ տխրեցնեմ։ Եթէ դու ինքդ չես նկատում այն, ինչ որ ես զգում եմ, ուրեմն ինչո՞ւ համար պիտի քայքայեմ քո բախտաւոր հանգըստութիւնը։ Աւելի լաւ չէ՞ որ միայնակ ես տանջուեմ։

—Ամենևի՛ն, մենք քոյր և եղբայր ենք. հետևապէս, պէտք է միասին տանջուենք,—զգացւած վրայ բերաւ Գորտէնզիան։

Եւգենին գլուխը կորացնելով՝ մի րոպէ լռեց, յետոյ արտասանեց հազիւ լսելու ձայնով.

—Մայրի՛կը...

Այս բառը արձագանք տուեց ջահել աղջկայ սրտի մէջ։ Նա տեղից վեր թռաւ, ընկաւ եղբօր գիրկը և արտասուախառն գոչեց.

—Ո՛հ, այո, մայրիկը դժբախտ է։

Եւգենին զարմացմամբ նայեց քրոջ վրայ և հարցրեց.

—Մի՞թէ դու այդ նկատել ես, Գորտէնզիա։

—Նկատել եմ։

—Եւ ոչ մի ժամանակ ինձ այդ մասին ոչինչ չե՛ս ասել!

—Ես չէի ուզում քեզ վշտացնել։

—Եւ դու ինքդ չէի՞ր տխրում, չէի՞ր վշտանում։

—Եթէ դու կարողանայիր իմանալ թէ որքա՜ն ճիգ էի թափում ուրախ ձևանալու։

—Ո՛հ, Գոնտէնզիա. սիրելի քոյրի՛կ, ինչքա՜ն ես փոքրոգի եմ եղել համեմատած քեզ հետ... Ինքս տխրում էի, մինչդեռ ես պիտի օրինակ լինէի քեզ ամուր մնալու։

—Սիրելի՛ Եւգենի, իրար մօտ սրտեր բանալը ամուր մընալուց լաւ է։ Մէկս միւսին հաւատ ընծայենք, մեր սրտերը իրար յայտնենք, շատ կարելի է, մի միջոց գտնենք, որով գուցէ կարող լինինք հանգստացնել մեր խեղճ մօր վշտերը։

—Դու նկատե՞լ ես թէ ինչպէս նա տխուր է. չընայելով

իր ունեցած ջանքերին, այնուամենայնիւ, նա չէ կարողանում թագցնել մեզնից արտասուքի կաթիլները, որոնք մեզ համբուրելու ժամանակ թափւում են նրա աչքերից։

—Ոհ, նա մեծ բան է զոհել՝ միայնակ բնակութիւն հաստատելով այս հեռու գիւղի մէջ, առանց որեւէ ծանօթի։

—Եւ այդ բոլորը մեզ համար է։

—Սովոր լինելով բաւականութեան, շքեղութեան, այժմ նա ստիպւած է մեզ արհեստի տալ, որպէս զի մենք ինքներս կարողանանք ճարել մեր օրւայ հացը։

—Ախ, Եւգենի, ես ոչ մի բանի համար չէի հոգալ, միայն թէ մայրիկը բախտաւոր լինէր։

—Ի հարկէ, մենք դեռ եւս ջահել ենք, կարող ենք ամեն բանի ընտելանալ... Հապա խեղճ մայրիկը... Զրկւած լինելով իր ամբողջ ունեցածից, ծնողներից և առհասարակ այն ամենից, որոնք նրա համար թանգ էին...

Եւ երեխայքը վշտացած՝ գլուխները կախ ձգեցին։

—Մեր սիրելի հայրը կորաւ... կախաղանի վրայ,—շարունակեց Եւգենին,—և նրա միակ յանցանքն այն էր, որ կռւում էր հայրենիքի համար... Եւ այդ պատճառով կորաւ նա, որպէս մի եղեռնագործ...

—Որպէս մի նահատակ,—վրայ բերեց Գորտէնզիան, գլուխը հպարտ կերպով բարձրացնելով։

—Ընկաւ նա եղեռնագործների հրամանով, որոնցից ես, ժամանակով, հաշիւ կըպահանջեմ նրանց շնորհիւ թափւած արդար արիւնի համար... գոչեց Եւգենին, պլպլող, բողոք արտայայտող աչքերով։

Եւ երեխայքը նորից արտասւեցին, միևնոյն ժամանակ մտածելով, թէ ինչ կերպ կարողանան թեթևացնել իրանց սիրելի մօր վշտերը։

—Մայրիկի անւանակոչութեան օրը մօտենում է, ասաց Գորտէնզիան,—հարկաւոր է մի ինչ որ բանով ուրախացնել նրան։ Դու գիտես, Եւգենի, թէ ինչպէս մայրիկը անհանգիստ

է լինում մեր ապագայի համար և թէ ինչպէս նա ցանկանում է, որ մենք շուտով սովորենք մեր արհեստը, որը նա ինքը ընտրել է մեզ համար...

—Այո, այո, ինչ որ բան նուիրենք մայրիկին: Դու որքան փող ես աշխատել մինչև այժմ:

—Ամբողջ մի լուիդոր: Իսկ դու, Եւգենի:

—Ես աշխատել եմ մօտ յիսուն ֆրանկ թղթադրամ. բայց որովհետև այժմ թղթադրամների արժէքը ընկած է, դրա համար իմս քո լուիդորից քիչ կարող է լինել:

—Ի՞նչ նուիրենք ուրեմն մայրիկին, հարցրեց Գորտէնզիան:

—Հարկաւոր է այդ մասին մտածել...

Հէնց այդ ժամանակ մի ձայն լսեց:

—Մ՜ս... մէկը գալիս է, ասաց Գորտէնզիան: Մտածիր, Եւգենի, մենք երեկոյեան այդ մասին կրկին կըխօսենք:

Երեխայքը բաժանուեցան:

Գեղեցիկ մատաղահաս աղջիկը գնաց պարտէզը և այնտեղ, ծնկաչոք ընկնելով Աստուածամօր պատկերի առաջ, որի հովանաւորութեանն էր յանձնուած անշուք տնակը, սկսեց ջերմեռանդ կերպով աղօթել...

Երեկոյեան դէմ երեխաները զբօսնում էին լայն փողոցում և խօսակցում էին այն մասին, թէ ինչ նուիրեն իրանց սիրելի մօրը: Նրանք երկար մտածում և դատում էին, սակայն ոչինչ չէին կարողանում վճռել:

Վերադառնալով տուն, ճանապարհին նրանք հանդիպեցան մի աղքատ և նիհար ծերունու: Խղճահարուելով անբախտ ծերունի դրութեան վրայ, երեխայքը մօտեցան նրան, խօսացին նրա հետ և իմացան, որ նրան այդօրինակ աղքատութեան մէջ ձգողը անգութ հրդեհն է եղել:

—Եւգենի՛, գոչեց յանկարծ ջահել աղջիկը,—մայրիկին սրանից լաւ ընծայ պարգևել մենք չենք կարող... Օգնենք մեր ունեցած փողով այս խեղճ ծերունուն:

—Ո՜րպիսի գեղեցիկ միտք, պատասխանեց Եւգենին: Եւ

երեխայքը արագ տուն վազելով, իրանց աշխատած փողը բերեցին և տւեցին աղքատին..

Մօր անւանակոչութեան օրը նրանք իրանց մայրիկին տարան ծերունու բնակարանը, որը, իրանց շնորհիւ, փրկւած էր աղքատութիւնից և յուսահատ դրութիւնից... Ծերուկը բոլորովին բախտաւոր էր զգում իրան,— ոչ թէ նրա համար, որ նրանց տւած գումարը ապահովում է իրան մինչև իր կեանքի վախճանը, այլ որ, այդ օժանդակութիւնը նորից ծագեցրեց իր մէջ յուսոյ ճառագայթները և տւեց նրան կարողութիւն՝ կարգի բերելու իր մի քանի գործերը։

Ծերունին ու իր ընտանիքը Գորտէնզիային և Եւգենիին օրհնում էին... Վերջիններիս մայրը անպատմելի կերպով բախտաւոր էր զգում իրան, որովհետև, երեխաների բարի վարմունքը—մօր վշտերն ու տանջանքները թեթևացնելու ամենագեղեցիկ միջոցն է։

II

ՆԱՊՕԼԷՕՆ ԲՕՆԱՊԱՐՏ

Այդ անցքից մի քանի օր անցած, մի շքեղ կառք, չորս գեղեցիկ ձիանը լծած, մտաւ Կրուասսա գիւղը։

Կառքը կանգ առաւ ուղիղ գիւղի մուտքի առաջ։ Նշանազգեստ հագած ծառան թռաւ իր տեղից, մօտ գնաց կառքի դռներին, լսեց այնտեղ նստած պատւաւոր պարոնի տւած հրամանը, և գնաց դէպի գիւղի ծայրում գտնւող տունը, որի շէմքի վրայ կանգնած նայում էին հետաքրքիր գիւղացիները։

—Ո՞րտեղ է բնակւում տիկին Ժօզէֆինա դէ-Բօգարնէն, հարցրեց ծառան գիւղացիներին։

Վերջիններս իրար նայեցին զարմացմամբ և, վերջապէս, նրանցից մէկը հարցրեց ծառային.

—Ո՞ւմ մասին էք հարցնում։

—Տիկին դէ-Բօգարնէի։

—Այդպիսի ազգանուն մենք չենք լսած:

—Ծառան վերադարձաւ պարոնի մօտ: Վերջինս զարմացմամբ ուսերը թափ տուեց և հրամայեց ծառային գնալ ուրիշ տեղերից հարցնել:

Երկար փնտրելուց յետոյ, ծառան պատահեց դայեակին: Լսելով այն անունը, որ գիւղացիներին անյայտ էր, դայեակը շշկլած նայեց ծառայի վրայ և վերջապէս պատասխանեց, որ ինքը ծառայում է այն իսկ կնոջ մօտ, որին նա փնտրում է:

Մի քանի րոպէ չանցած, յիշեալ կառքը կանգնեց անծանօթ կնոջ տնակի առաջ:

Պարոնը, որը կառքով եկել էր, Բարրա՛ս հիւպատոսն էր: Տիկին Ժօզէֆինա դէ-Բօգարնէին նա լուր էր բերել, որ բոլոր նրա ունեցուածքը վերադարձրուած է իրան և որ նա նորից կարող է իշխել նրանց:

Երևակայեցէք ձեզ Գորտէնզիայի և Եւգենիի ուրախութիւնը, երբ նրանք իմացան, որ իրանց մօր վշտերը պիտի անցնեն...

Ժօզէֆինա դէ-Բօգարնէին, որին այնպիսի մի վսեմ բախտաւորութիւն էր սպասում, վերադարձաւ Պարիզ: Պարոն Բարրան շքեղ խնճոյք կազմեց, ուր տիկին դէ-Բօգարնէն փայլում էր իր խելքով, հրաշալիութիւնով և հոգեկան գեղեցիկ յատկութիւններով:

Գեներալ Բօնապարտը յաճախ ներկայ լինելով այդ խընճոյքներին, տեսաւ Ժօզէֆինա դէ-Բօգարնէին, թովուեց նրա գեղեցկութիւնից և զգացմունքների վսեմութիւնից:

Մի առաւօտ, երբ Բօնապարտը նախաճաշիկ էր արել, նրան յայտնեցին, որ մի ինչ որ երեխայ կամենում է իրան տեսնել: Գեներալը, այդ րոպէին, զբաղուած լինելով Իտալիայի դէմ արշաւանքի ծրագիրը կազմելու տենչով, հրամայեց պատասխանել, որ այժմ ժամանակ չունի: Բայց երեխան յամառկերպով պահանջեց, որ իրան թոյլ տրուի, և ասաց, որ յետ դառնալ չէ կարող, մինչև որ գեներալին չըտեսնէ:

Տաճիկ մրգավաճառ

Բօնապարտին այդ շատ զարմացրեց և նա հրամայեց կանչել երեխային։ Սկզբից գեներալը ուզեց երեխային խիստ կերպով ընդունել, սակայն երբ նկատեց նրա դէմքի շնորհալիութիւնը և ազնիւ լինելը, ապշած մնաց և քաղցրութեամբ հարցրեց.

—Ո՞վ ես դու, իմ բարեկամ։

—Եւգենի դէ-Բօգարնէ։

—Հա՛, այժմ այլ ևս չեմ զարմանում քո արտաքին ազնուութիւնից... Ի՞նչ է հարկաւոր քեզ, իմ սիրելի՛։

—Ես պահանջո՛ւմ եմ, որ հօրս՝ գրաֆ դէ-Բօգարնէի սուրը ինձ վերադարձնեն։

—Նրան քեզ կըվերադարձնեն։

—Ես պահանջում եմ նոյնպէս, որ դուք նրա մահւան վրէժն առնէք։

—Կառնեմ... Թէպէտ, բոլոր եղեռնագործների արիւնը չարժէ քո ազնիւ հօր մի կաթիլ արեանը։

—Շնորհակալ եմ, գեներալ։ Դուք քաղցրութեամբ ինձ լսեցիք։ Ես այժմ կարող եմ հեռանալ։

—Սպասիր. բայց մի՞թէ դու քեզ համար ոչինչ չես կամենում խնդրել։

—Ես մինչև այժմ հլուսն լինելով, կամենում եմ այժմ էլ զինուոր լինել։

Գեներալ Բօնապարտը քնքոյշ կերպով ժպտաց։ Նրան շատ դուրալի թւեց Եւգենիի քաջարի և քաղաքավարի բնաւորութիւնը։ Թեթև կերպով նրա թշերը շոյելով՝ ասաց նրան.

—Դու քա՛ջ ես և միևնոյն ժամանակ, փառասէր չես։ Քեզանից գովելի զինւոր կարող է լինել։ Մի երկու տարի էլ սպասի՛ր, այնուհետև առաջին արշաւանքիս քեզ հետս կըվերցնեմ։

Մի քանի խօսքով կըպատմեմ ձեզ այս անցքի վերջաբանը, իմ սիրելի բարեկամներ։

Տէրը վարձատրեց խոնարհութիւնը և ժուժկալութիւնը այն կնոջ, որին Կրուասսայի բնակիչները անծանօթ կին էին անւանում։ Փօզէֆինա դէ-Բօզարնէն ամուսնացաւ Բոնապարտի հետ և երկար ժամանակ կենակցեց այդ մեծ և հանճարեղ մարդու հետ։ Թագաւորական թագը զարդարեց նրա գլուխը։ Սակայն, թէ մեծութիւնը և թէ շքեղութիւնը չըկարողացան նրա սրտի մէջ բաբախող ողորմութեան ձայնը լռեցնել...

Ֆրանսիացիները օրհնում էին նրան և ժողովրդի ընդհանուր ձայնը նրան Ֆրանսիայի բարի հանճար էր անւանում։

Նրա երեխաների վիճակը, որ իր վրայ էր առել նոր ժամանակների Կեսարը,—շատ լաւ էր անցնում։ Ասաղձագործի աշակերտ Եւգենին դարձաւ Իտալիայի փոխարքայ, իսկ ջահել ասղնեգործ աղջիկը, Գորտէնզիան, բազմեց Հոլանդացւոց թագաւորական աթոռի վրայ...

Հեռու Ֆրանսիայից, իր հայրենիքից, որի համար ամեն ժամանակ բաբախում էր նրա բարի սիրտը, մեռնելով Եւգենին, նա չըմոռացաւ Կրուասսայի ծեր Հիւմնին։ Իր կտակի ամենաառաջին կէտում, այդ պատւելի և բարի արհեստաւորի համար ռոճիկ էր նշանակել, որով նա օգտւեց մինչև իր կեանքի վախճանը...

Ոսկէզօծ տառերով արձանագրւած է այդ բարեգործութիւնը անմահութեան գրքում։ Եւգենի դէ-Բօզարնէն մեծահոգութիւնով վճարեց իր երախտագիտական պարտքը, սրտի այդ յիշողութիւնը, որին շատերը կորցնում են իրանց բարեբախտութեան ժամանակ...

Բ. Թումեան



ԿՈՒՌՔ

(Արեւելեան զրոյց)

VII

Արդէն դեռ շատ վաղ մտածում էր Տիրան,
Պարզ ապրել ինչպէս մի հասարակ մարդ:
Նա վաղ զզուել էր հօր պալատական
Ձեւացումներից խիստ ծանր ու բարակ,
Որոնք մահացնում էին ժամանակ:
Նա տատանւում էր, չըգիտէր ինչպէս
Մի կերպ հեռանալ, թողնել հօր պալատ,
Իսկ այդ իրիկուն, երբ հօրն ուրուական
Նրան վռնդեց, նա էլ վրդովւած
Վճռեց գործադրել իր այդ նպատակ:

Մի սիրուն տնակ պալատի կողքին
Նա շինել տուեց, ո՛չ մեծ, ահագին.
Անթիւ ծառաներն նա գործի դրած
Ցրւեց, հեռացրեց և կինը մենակ,
Հոգուն չափ սիրած և անչափ սիրւած,
Առաւ ու քաշւեց այդ բնակարան:

Բարեկամներին իր սիրալրութեամբ
Աւելի սիրով, աւելի անկեղծ
Էլ պինդ կապերով իրան հետ կապեց:
Իսկ բարեկամներն էին իմաստուն,
Չէին ծառայում Նրա ժանտ ոսկուն.
Այլ ձգտում էին ձեռք ձեռքի տուած
Թռչել ու հասնել սուրբ գաղափարին:
Թէ քաշւում էին մինչ այդ ժամանակ,
Կարծիքներ յայտնում ոչ շատ համարձակ,
Կաշկանդւած շարժւում իր հօր պալատում,
Այն որմերից ներս, որոնք արիւնով
Էին շաղախւել, յիշեցնում նրանց
Ոչ շատ վաղ անցեալն բռնակալութեան,
Իսկ այժմ սրտից սիրտ աներկիւղ, ազատ
Բաց խօսում էին իրանց մտածած:
Նա յատկացրեց հայրական պալատն
Խորհրդարանի, որտեղ պետական
Գիտունների դասն հաւաքւում էր,
Միտք փոխանակում և ժողովրդի
Բարեբախտութեան ուղին ծրագրում:
Տիրանն այս գործով տիրեց ողջ աշխարհն
Անզէն, անարիւն, այլ յօժարակամ:
Ամբողջ մարդկութեան թէ սիրտ թէ հոգին
Ինքնին փռւեցան Նրա ոտքի տակ:
Եւ Նրա հռչակն, անուն բարեբար
Զմայլեցնում էր ազգերը համայն:
Բայց Նրա դէմքից տխրութեան մռայլն
Երբէք չըհեռացաւ, վերջացաւ իսպառ.
Անբացատրելի մի դժգոյն թախիծ,
Անբաժան մնաց Նրա երեսից:
Իշխանի գործերն և այս բոլորը
Դամբանում ցնցում էին իր հօրը.

Եւ նա յամառուած, թէև չէր ուզում
Այլ ևս իր որդու երեսը տեսնել,
Բայց համբերութիւնն կտրեց իսպառ,
Հանգստարանից եկաւ դարձեալ տուն,
Նողկալի դէմքով, էլ դաժանացած.
Էլ ձայն չըհանեց, չըկարաց մնալ,
Կռուփով թքեց, շուռ եկաւ գնաց։

VIII

Ճիշտ քսան տարի այսպէս շարունակ
Բիւր բարով գեղեց, շէնցրեց աշխարհ.
Եւ ժողովուրդը իրան անկաշառ
Առաջնորդներով խելք խելքի տուած
Խորհրդի նստաւ, որ անկեղծ յարգանք
Յայտնի իշխանին մի յաւերժական
Անջինջ մեծ գործով։ Եւ այդ ժողովում
Ամեն մարդ մի բան էր առաջարկում։
Բայց մահկանացու ուղեղում ծնունդ
Ո՞րտեղից առնէ գործ յաւերժական։
Ո՛չ դղեակ, պալատ, ո՛չ անդրի, արձան,
Ոչ պորփիւր կոթող, ո՛չ մեհենական.
Նշան ու նկար չէ անմահական։
Ամեն ձեռագործ, շուտ թէ անագան
Մատնւելու է ժամանակի դառն
Անխուսափելի, անգութ կործանման։
Ի՞նչպէս կարող է տարերքից շինուածն
Տոկալ, չըլուծւել նրա հանդիման...
Իսկ նրանց տիրոջ բարիքի փոխան
Պարտք էին դնում յաւիտենական
Յիշատակ կանգնել, որ այս աշխարհի
Ամեն մի ուժով չըլինի հնար
Անհետացնել այդ, կործանել իսպառ.

Իսկ Տիրան իշխան, տեսնելով նրանց
Այդ աշխատութեան ջանքերն ու վաստակ,
Խուլ համբերութեամբ դիտում էր հեռուից,
Լեզուին կապ դրած, սրտին սեւ թախիծ։
Նա առանձնացած, միշտ մռայլ, տխուր,
Գիտունների ջանք համարում էր զուր։
Կազմեց վերջապէս ալեզարդ ծերուկ
Մի գաղտնի խորհուրդ կղերին յատուկ,
Բարձրացաւ ամբիոն, խօսեց խրոխտագին,
Իր ծրագրածը պատմեց ամենին,
Եւ ճարտար լեզուով գրաւեց, մոլորեց։
Փողովականներն առանց տատանման
Խիստ ոգեւորուած, համաձայնեցան։
Վճռեցին իրանց լսկական նպատակ
Խիստ գաղտնի պահել։ Յայտնեցին միայն
Հասարակութեան, թէ մի մեծ մեհեան
Ուզում են կանգնել Տիրանի համար։
Եւ ամբողջ երկրին մի սիրտ, մի հոգի
Կպաւ այդ գործին տուած ձեռ ձեռքի։
Աշխարհում ապրող ամեն մի անհատ
Մանուկ թէ ալեւոր, կին թէ տղամարդ
Բերում գցում էր մեծ ուրախութեամբ
Իր թանգագին գանձն, սիրած առարկան
Հասարակական այդ ձեռնարկութեան
Ամբարների մէջ։ Եւ կարճ միջոցում
Դիզեցին մեծ գանձ, անբաւ ու անհուն։

IX

Երբ հիմք փորեցին քաղաքի միջում
Մի բլրի գլխին լայն ու ընդարձակ,
Կարծր պորփիւրից շինել մի տաճար։
Պետութեան մէջ ինչ արհեստաւոր կար
Դիմել էր քաղաք, սիրով ու յօժար,
Թողել էր հեռուն իր խեղճ ընտանիք

Անտրտունջ փոխում, թափում իր քրտինք,
Ճակատից ծորած ամեն մի կաթիլ
Հատ հատ գլորւում էր, որպէս մարգարիտ,
Որ գոհ էր բերում անձնուիրաբար
Սիրած իշխանին փոխարինաբար։

Ամբողջ տասը տարի հարիւր հազար մարդ
Բանում էր այնտեղ անխոնջ անդադար,
Ամեն մի բանւոր օրից օր էլ տաք,
Հոգով ու սրտով կպչում էր գործին։

Շինեցին պրծան ահաւոր տաճարն
Որի գմբէթն էր հասնում ամպերին։
Սքանչելի գործ, ահռելի կամար,
Գրաւիչ պատկեր, աննման քանդակ,
Մի խօսքով ահեղ, հրաշալի մեհեան։
Ներքին պատերը, սիւներն ու կամար
Պատած էր գոյն գոյն ակով պատուական,
Որոնք ձեւանում էին նրբութեամբ
Իշխանի կեանքից պէս պէս տեսարան.
Գեղարւեստական պատկեր ու նկար,
Ճարտար հրաշակերտ անեղծ, անթառամ։
Եւ մի մեծ պալատ, սրան յար—նման,
Նախկին պալատից էլ հարիւր անգամ
Մեծ ու գեղեցիկ կերտեցին պրծան,
Իրանց սիրելի իշխանի համար։

Միեւնոյն տարին լրացրեց իշխան
Իր աշխարհ եկած յիսներորդ շրջանն,
Այդ տօնի առթիւ պատրաստուեց տաճարն
Համաշխարհային հանդիսի համար։

Տօնի օրերում երկրի այլ և այլ
Բնակիչներից մեծ ամբոխ ազգ ազգ
Եկան, ժողովեցան և մայրաքաղաքն
Անվերջ, անդադրում երգեց ու ցնծաց,
Նրա խնդութեան չըկար չափ սահման։

ԱՏՐՊԵՏ

(Վերջը միւս անգամ)

ՎՈԼ՚ՖԳԱՆԳ ԳԵՕԹԷ

IV.

Վէյմարը մի գեղեցկադիր քաղաքիկ է, նշանաւոր եղաւ նրանով, որ Գերմանիայի ամենամեծ բանաստեղծը իր կեանքի մեծ մասն անցկացրեց այնտեղ և ստեղծեց այդտեղ իր հանճարեղ երկերը: XVIII-րդ դարու վերջերում իշխանակալ պետերը աշխատում էին իրանց պալատներում պահել ժամանակի անուանի փիլիսոփաներին, բանաստեղծներին, գիտնականներին. եթէ այդ հնարաւոր չէր լինում, նամակագրութեամբ գոնէ հաղորդակցութիւն էին ունենում նրանց հետ: Այդպէս վարւեց և Վէյմարի երիտասարդ դուքսը. Նրա մօտ էր երևելի գրուցաբան Մուզէուսը, յայտնի նկարիչ Կրաուսը, անուանի գրող Վիլրնդը և ուրիշ շատ յայտնի դերասաններ, երգչուհիներ և այլն:

Շուտով Գեօթէն մտերմացաւ Վէյմարի բարձր դասի հետ և ամենքը նրան սիրում՝ մինչև անգամ պաշտում էին: Խրնճոյքներին և այլ զւարճութիւններին վերջ չըկար, սակայն Գեօթէն ընդունակ չէր երկար ժամանակ ունայն կեանք վարելու. Նա սկսեց առանձնութեան ձգտել, որպէս զի կարողանայ պարապել. դուքսն այդ նկատելով գնեց նրա համար Վէյմարի շրջակայքում մի գեղեցիկ գիւղատուն, ուր և բնակւեց Գեօթէն. այժմ նա սկսեց լուրջ կեանք վարել և չընայած իր երիտա-

սպրդութեան, դուքս Կարլոսի մենտորը դարձաւ, այնպէս որ վերջինս 1776-ին նրան իր կառավարութեան խորհրդական նշանակեց պատշաճի ռոճիկով։ Գեօթէի Վէյմարեան շրջանի սրտի պաշտելին էր տիկին Շտէյնը, պալատական կնոջ մի կատարեալ տիպ, գեղեցիկ, կրթուած, դեղարուեստական նուրբ ճաշակով. տիկին Շտէյնը արդէն 33 տարեկան և 7 զաւակների տէր էր, բայց իր գիւթիչ հրապոյրը չէր կորցրել և նա կարողացաւ իր ազդեցութեամբ զսպած պահել Գեօթէին շուայտ կեանքից։ Գեօթէն այժմ բուռն կերպով աշխատում էր գրականութեամբ. նա գրում էր «Իֆիգենիան», «Էգմոնդը», «Վիլհելմ Մէյստէրը» և այլ բանաստեղծական խոշոր գրուածներ։ Այս միջոցին Գեօթէին Վէյմարում Ապոլլոն էին անուանում, այնքան նա գեղեցիկ էր մարմնով և հոգով։

1779 թուի աշնանը Գեօթէն մի ուղևորութիւն արաւ դէպի Շուէյցարիա. այցելեց բոլոր նշանաւոր ձորերը, հովիտները, լեռները, լճերը և երկար մանուածապտայտ շրջաններ անելով, գնաց Ջենզենհէյմ գիւղը Ֆրիդերիկային տեսնելու. պաստորի տանը սիրալիր կերպով ընդունեցին նրան և մի խօսք անգամ չ'ասացին նրա պատճառած վշտի մասին։ Այնտեղից գնաց Ստրասբուրգ, ուր գտնւում էր արդէն ամուսնացած նրա սիրած միւս աղջիկը՝ Լիլին. այստեղ ևս նրան մտերմաբար ընդունեցին։

Այս ճանապարհորդութիւնից յետոյ Գեօթէն մտաւ իր առնական հասակը. նա ամեն կերպ իրան չափաւորեց և կարգ ու կանոնի տակ դրաւ։ 1780 թւականը նա անցկացրեց պետական և գրականական յարուած գործունէութեան մէջ, այլ և բուռն կերպով պարապւում էր բնագիտութեամբ. գրեց իր Շուէյցարական նամակները, «Իմ աստուածուհին» և այլ բանաստեղծութիւններ։ Եւ այդ ձևով նրա եռանդուն զբաղմունքները շարունակւեցան մինչև 1786 թւականը, երբ այնքան նիւթ էր ժողովել, որ նա սպայմանաւորուեց Լէյպցիգի գրավաճառ Հեշենի հետ ութ հատոր հրատարակելու նրա գրուածքներից։ Սոյն միջոցին նա կենսական կարիք զգաց երկար հանգիստ առնելու բազմազբաղ տարիներից յետոյ, հոգևոր նոր սնունդ ստանալու և կազդուրուելու համար։ Այդ թւին—1786-ին՝ նա գնաց Կարլսբադի հանքային ջրերը, ուր ամառն անցնելով, սեպտեմբերի 3-ին առանց մէկին բան ասելու ուղևորուեց դէպի Իտալիա, միայն իր հովանաւոր դուքսին հրաժեշտի մի նամակ գրեց անորոշ ժամանակով արձակուրդ խնդրելով։

V

Սեպտեմբերի 16-ին Միւնխէնի և Թիրօլ'ի վրայով Գեօթէն հասաւ Վերօնա, ուր նայեց հին ամֆի-թատրոնը։ Այդտեղից գնաց Վիզենցա, ուր մնաց մի շաբաթ և դիտեց նշանաւոր ճարտարապետական շինութիւնները։ Յետոյ գնաց Պատաա և Վենետիկ՝ դրանց հրաշալիքները դիտելու, այցելեց Հայոց Մխիթարեան վանքը համանուն կղզում և իր անչափ հիացմունքը յայտնեց, որ խոր արևելքից մի բուռն մարդիկ եկել, աշխատում են իրանց հայրենիքի լուսաւորութեան համար։ Վենետիկի հրաշալի շէնքերից նրա ուշքը դրաւեց մանաւանդ Ռետենդօրէ եկեղեցին, Կարիտա վանքը և պատկերներից Պաօլօ Վերօնիչէի նկարածը՝ ծունկ խոնարհած Դարեհի ընտանիքը Աղէքսանդրի առաջ։ Տեսնելով իտալական ուրախ, թեթև և աշխոյժ կեանքը, իր հայրենական հիւսիսային բընագաւառները նրան բանտ էին թւում։ Վենետկից ծովով գընաց Ֆէրրարա, Բօլոնիա, ուր հիացաւ Ռաֆայէլի «Սուրբ Ագաթա» պատկերով։ Հոկտեմբերի 23-ին մտաւ գեղարւեստի օրրան Ֆլօրէնցիան, դիտեց Լէօնարդօի, Միքել-Անջելօի և Ռաֆայէլի գործերը, վերջապէս Պերուջիօ և Սպօլէտօ քաղաքներից անցնելով մտաւ Հռոմ։ «Այժմ ես հանգիստ եմ, — գրում էր նա Վէյմար իր բարեկամներին,—ամբողջ կեանքիս մէջ գոհ ու հանգիստ կըլինեմ, որովհետև Հռոմում մենք աչքով տեսնում ենք իր կատարեալ ամբողջութեան մէջ այն ամենը, որի մասին մենք միայն լսել էինք և հատ ու կտոր ուրուագծերը միայն տեսել. այստեղ ինձ համար սկսւում է նոր կեանք»։ Գեօթէն գրում է, որ ինքն Իտալիայում վերածնւեցաւ և նոր մարդ եղած վերադարձաւ այնտեղից։ Նա տեսաւ պապի փառահեղ սրբագնագործութիւնը պատարագի ժամանակ, բայց դժգոհ եղաւ, որ այս հանդիսաւոր միջոցին պապը չըդարձաւ ժողովրդին հովուական խօսքով։ Ամբողջ 3 ամիս նա մնաց Հռոմում և ուսումնասիրեց գեղարւեստական և պատմական յիշատակարանները մշտնջենական քաղաքի։ Նրա առաջնորդն էր իր հայրենակից Թիշբէյն նկարիչը։

1787-ի փետրւարի 22-ին նա մեկնեց դէպի Նէապօլ. այստեղ հրապուրւեցաւ բնութեան գեղեցիկ տեսարաններով—

ջինջ երկինք, անծայր ծով, Հրաբղխային Վեզուվ լեառը, Նրա մոխրի տակ թաղուած Հերքուլան և Պոմպէյա քաղաքները և այլն։ Նա բացականչեց. «Բնութիւնն է այն մատեանը, որի բոլոր բովանդակութիւնը մեծ է հաւասարապէս»։ Գիշեր ու ցերեկ Գեօթէն պտտում էր ծովափին և երեք անգամ բարձրացաւ Վեզուվի կատարը։ Նէապօլ'ից գնաց Սիցիլիա և այնտեղ շատ շրջագայութիւններ արաւ, յետոյ մայիսին 17-ին կրկին վերադարձաւ Հռոմ և կրկին շարունակեց իր գեղարուեստական ուսումնասիրութիւնները։ Այդ միջոցին նա ձեռնարկեց իր նշանաւոր «Фаиѕт» հոյակապ երկի վրայ աշխատել, որի գաղափարը նրանում յղացել էր դեռ տասնուհինգ տարի առաջ։ 1788-ին մարտին նա կազմեց Фաուստի ծրագիրը և իր միւս գրական գործերն էլ բաւական առաջ տարաւ։ Նոյն թուի յունիսին նա դարձաւ Վէյմար։ Իտալիայի ճանապարհորդութիւնը խորին ներգործութիւն արաւ Գեօթէի բնաւորութեան վերջնականապէս զարգանալու և հետագայ գործունէութեան վրայ։ Փոխուել էր նրա ճաշակը և հայեացքը գեղարուեստի վրայ, այն ժամանակ էր զգում միայն, որ իր աշխարհահայեցողութիւնը ամբողջ է և որոշ։ Վէյմար ժամանելով՝ նա տեսաւ, որ իր նախկին մտերիմները իրան չեն կարող ըմբռնել. Նրանք էլ նկատեցին, որ Գեօթէն, բոլորովին փոխուել է, և հետզհետէ իրարուց սառեցին և բանաստեղծը խնդրեց դուքսից, որ իրան արձակէ բոլոր պաշտօններից առանձնացած գրականական կեանք վարելու համար։ 1788-ին դարձեալ մի նոր դէպք որոշ գոյն ու վերջնական ուղղութիւն տւաւ Գեօթէի կեանքին։ Մի անգամ նա ծառաստանում պտտելիս հանդիպեց մի մատաղատի հասարակ դասի աղջկայ, որ նրան մի խնդրագիր ներկայացրաւ իր եղբօրը պաշտօն տալու համար։ Աղջկայ անունն էր Խրիստինա Վուլ'պիուս, որին վիճակուեց լինել մեծ բանաստեղծի ամուսինը։ Շուտով Խրիստինան տեղափոխուեց Գեօթէի մօտ և մի տարուց յետոյ նա արդէն մի զաւակի տէր էր, որի անունը դրին Աւգուստ։ Վէյմարի բարձր դասը վերին աստիճան զարմացաւ և զայրացաւ Գեօթէի այս քայլի վրայ, որ նա մի հասարակ դասի աղջկայ հետ է կենակցում. շատերն իրանց յարաբերութիւնը բոլորովին կտրեցին նրանից, միայն դուքսն էր, որ նախապաշարումներից բարձր պահեց իրան և նրա անդրանիկի կնքահայր եղաւ։ Սակայն

Գեօթէն իր ցանկացած անդորրութիւնը չըկարողացաւ ձեռք բերել, որովհետև 1789 թւին սկսւեց Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, որի հրդեհն սպառնում էր բռնել ամբողջ Եւրոպան: Գեօթէն առ հասարակ սիրում էր ամեն խնդրի խաղաղ ճանապարհով և տակաւ առ տակաւ վճռելը, բայց նա ստիպւած եղաւ մինչև անգամ պատերազմական բանակում լինել: 1792 թւին պատերազմ ծագեց Աւստրիայի և Պրուսիայի կողմից Ֆրանսիայի դէմ: Գեօթէն իր սիրելի դուքսի հետ գընաց պատերազմի դաշտը դիտելու մարդկային կեանքի այդ կողմն էլ: Չփոթութեան այն տարիներում թէպէտ նա չէր դադարում աշխատելուց, սակայն հնար չըկար շատ արդիւնաւոր լինելու. այդ ժամանակ ի միջի այլոց նա գրեց «Ռեյնիկէ աղւէս» պօէման:

Ն. Տէր-Աւետիքեան

(Կըշարունակւի)



Գիտական զբօսանք

ԽՑԱՆ «ԻՆՉՊԷՍ ԿԱՄԵՆԱՔ»

Այցետոմսի կամ խաղաթղթի մէջ կտրեցէք երեք բացուածք, բոլորակ, քառակուսի և եռանկիւնի:

Եռանկեան բարձրութիւնն ու շէնքը, քառակուսի կողմերը, բոլորակի տրամագիծը և փորձի համար վերցրած խցանի տրամագիծը պէտք է իրար հաւասար լինին:

Տուէք այդ կերպ կտրուած թուղթը որևէ մէկի ձեռքը և խնդրեցէք նրան խցել բոլոր երեք բացուածքները միևնոյն խցանով. (բայց, ի հարկէ, ոչ միաժամանակ):

Բոլորակը նա կըփակէ իսկոյնևեթ, պատճառ որ խցանը ներկայացնում է հատուածքում նոյնպիսի բոլորակ. իսկ միւսների վերաբերեալ նա դժուարութեան մէջ կ'ընկնի:



Սակայն այդ այնքան էլ դժուար չէ. խցանը կտրենք իր կազմին համընթաց կերպով, այնպէս որ նրա բարձրութիւնը հաւասար լինի տրամագծին: Ապա գնենք այդ խցանը բացուածքի մէջ ուղիղ դիրքով, և խնդիրը լուծուած է, կըմնայ եռանկիւնը.— այս մի քիչ դժուար է:

Այստեղ մեր խցանը պէտք է ենթարկենք երկու կտրուածքի, որոնք միանում են միւսի հատուածքի տրամագծերից մէկն ու մէկի վրայ, և որոնք հպւում են ներքևը՝ խցանի ստորին հատուածքի անկիւնին, այդ տրամագծին զուգահեռաբար: Խցանն ընդունում է եռանկեան ձև, ինչպէս ցոյց է տրուած և պատկերի մէջ: Դուք ոչ մի բան փոփոխման չ'ենթարկեցիք ո՛չ նրա բարձրութեան, ո՛չ էլ նրա շէնքի մէջ. եռանկեան ձև ստացած խցանի կողքը մեզ ցոյց է տալիս, որ խնդրի այս մասն էլ նոյնպէս լուծուած է բաւական յաջող կերպով. բացուածքի մէջ կը դնէք խցանը՝ աչքի առաջ ունենալով այդ պատկերը, և կը տեսնէք, թէ որպիսի ճշտութեամբ նա կը ծածկէ եռանկեան բացուածքը:

Գ. Բ.

ԶՒԱՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Ղ. Քպ. Ճ.

5) Վեց տառի մէջ վէճեր ելան
Ու երկու քի բաժնուեցան,
—Կուսակցութիւն, կ՚ըսեն, լաւ չէ.
Որո՞ւ կ՚լսես, ո՞վ կ՚ըլըսէ,—
Առջի երեքն ըսին,—«մենք եմք՝
Որ քու մօրըդ կեանք տուեր եմք».
Միւս երեքն ալ միաձայն,
—«Երբ Թուղթ չի կար դեռ Հայաստան,
Մեր կաշիին վրայ գրեցաւ՝
Ըսին, Սաղմոս, Աւետարան»։
Վէճը դադրաւ, համբուրուեցան,
Եւ իրարու հետ միացան,
Միութենէն բարիք ծընան
Եւ կեանք ու լոյս տարածուեցան։

—

Առաջ. Ռոյնի.

6) Անոյշ ձայնիւ զմայլած՝
Ամենքը գլխ կըսխրեն,
Երեք գլուխ, երկու ոտք՝
Իմ ամբողջըս կըկազմեն.
Բայց իմ երկու ոտքերէն՝
Անոյշ ջուրեր կըբըղխեն։
Գըլուխները թէ ջարդեն՝
Ամենուն լաց պատճառեմ,
Բայց սա կայ՝ որ ամենքն ալ՝
Իմ գըլուխներըս կ՚ուտեն,
Եւ իրանց չոր ծարաւը՝
Ոտքերուս ջրովն անցունեն։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Типографія И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.
Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Февраля, 1898 года.

ՄՈՒՐՃ

Քաղաքական-հասարակական-գրական ամսագիր

1898 *թւականին* (ՏԱՍՆԵՐՈՐԴ *տարեշրջան*) *հրատարակւում է նախկին ծրագրով:*

Բաժանորդագինն է տարեկան 10 րուբլի: Վճարել կարելի է մաս-մաս սկզբում 5 ր. մինչև յունիսի վերջը:

Հասցէ. Тифлисъ, въ редакцію «МУРЧЪ».

Խմբագրատունը գտնւում է Սերգիևսկայա փողոց, № 6.

Բաժնւում կարելի է գրւել նաև պ.պ. Ֆր. Մարդանեանի (контора Е. и А. Меликовы) և Մկրտիչ Մանուչարի մօտ (Отд. Тифл. Коммерч. банка).

Այլ քաղաքներում կարելի է գրւել այն անձերի մօտ, ում մօտ կան Մուրճ'ի անդորրագրեր:

(փ. 3—2) **Խմբագիր-հրատարակիչ Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ**

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ХУДОЖЕСТВЕННЫЙ И ЮМОРИСТИЧЕСКІЙ ЖУРНАЛЪ СЪ КАРИКАТУРАМИ

XX ГОДЪ. # „ШУТЪ“ **XX ГОДЪ.**

Годъ назадъ программа журнала „ШУТЪ“ была измѣнена.

Избѣгая всего грубаго, могущаго оскорбить чувство изящнаго, журналъ „ШУТЪ“, за этотъ годъ, заинтересовалъ наши гостиныя и появился въ семейныхъ домахъ.

Журналъ даетъ литературно-юмористическій и художественно-карикатурный обзоръ общественной жизни въ легкой юмористической прозѣ и стихахъ, отмѣчаетъ текущія злобы дня и рисуетъ настроеніе политическаго горизонта.

Одною изъ первыхъ задачъ журнала явилось желаніе ознакомить читающую публику съ произведеніями нашихъ русскихъ художниковъ, благодаря чему журналъ обогатился приливомъ свѣжихъ художественныхъ силъ.

Иллюстрированіе произведеній русскихъ писателей, поэтовъ и стариннаго русскаго народнаго эпоса является основною цѣлью изданія, при чемъ рисунки печатаются красками съ сохраненіемъ факсимиле.

Туманныя представленія иноземцевъ о русской жизни и искусствѣ вызвали желаніе дать непосредственный матеріалъ русскаго художественнаго и литературнаго творчества, для чего параллельно съ русскимъ текстомъ печатается и текстъ на французскомъ языкѣ, признанномъ международнымъ.

Къ такому почину нашего журнала особенно сочувственно отнесся Парижъ. Органы французской прессы, какъ „Figaro“, „Le Temps“, „L'Etoile“, „Le Monde moderne“, „Revue du Cercle militaire“ и другіе, посвятили сочувственныя статьи нашему предпріятію.

Въ заключеніе, всѣмъ развинтившимъ нервы, страдающимъ катарромъ и семейными сценами рекомендуемъ читать нашъ журналъ—онъ возстановляетъ жезненное равновѣсіе и развиваетъ оптимизмъ.

Пріемъ подписки въ С.-Петербургѣ: Контора редакціи, Б. Морская д. 26.

Въ Москвѣ: Контора Н. Печковской, Петровскія линіи.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ перес. и дост.

На годъ	7 *р.*
На 6 мѣсяцевъ	4 „
На 3 мѣсяца	2 „ 50 *к.*
За границу	10 „

Разсрочка по соглашенію съ конторой

Цѣна отдѣльнаго №—20 коп. **Редакторъ-издатель Р. ГОЛИКЕ.**

6—3.

IX ՏԱՐԱԶ IX

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտան. ընթերցանութեան համար:

Հրատարակւում է նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակից-
ների մասնակցութեամբ:

Տարազը լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1-2 թերթ.

ԾՐԱԳԻՐ

Գեղարւեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական գրւածքներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային, արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկած: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդւածներ եւ այլն: Ֆելիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատ եւ այլ խաղեր, Րեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ:

Հեռու առօրեայ, աշխարհային խնդիրներից, նւիրւած գեղեցկին և ճշմարտին՝ հայ գրական անդաստանում ՏԱՐԱԶԸ *մեծ պարտք և դեր ունի կատարելու...* ՏԱՐԱԶԸ *հասունացած հայ պատանիների, երիտասարդների և նոյն իսկ ծերերի թէ զւարճացնող է, թէ թախծալից ժամերին նրանց բարեկամը:*

Ներկայ 1898 թ. կըտպագրւեն **Տարազում** ի միջի այլոց **Էմիլ Զոլայի** նշանաւոր վէպը որ լոյս չըտեսած այնքան մեծ աղմուկ հանեց աշխարհիս բոլոր գրական աշխարհում և միաժամանակ բնագրի հետ տպագրւում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի այդ կըտպագրւեն մի շարք վէպեր և պօէմաներ, որոնց թւումն է և՛

ՊԱՐԻԶ

ՄԵՐ ՔԱՂԱՔ շատ մեծ վէպ, Բագւայ **բուրժուազիայի, գործարանական եւ Բալախանի գործաւորների կեանքից:**

Ե. ԴՐԲԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ վէպ Կ. Պոլսի սուլթանների կեանքից: Քաղաքական և ներքին աշխարհ Տաճկաստանի, ազգային սահմանադրութիւն: Ենիչէրներ, վէզիրներ, հոգեւորականութիւն և ժողովուրդ:

ՏԱՐԱԶԻ *պրէմիան*—**ՄԵԾՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *մի մեծադիր խրոմօ է, սքանչելի պատկեր, պատրաստւած Եւրոպայի ամենանշանաւոր գործարանում, փառայեղ զարդ հայի դահլիճին:*

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 **ՌՈՒԲ. ՄԵԾՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ** *պրէմիայով* **եօթը** ր. (առաքմամբ 10 ր. կամ 30 ֆր.): Ամիսը 50 կ.

Իւրաքանչիւր պրէմիան առանձին արժէ 3 ր.: Աղբիւր-Տարազ միասնոյն հասցէով գրւողը, երկու պրէմիաների նաւապարհածախս պէտք է վճարի միայն մէկ ռուբլի:

Հասցէն՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **ТАРАЗЪ** *կամ* Tiflis (Caucase) Réd. du jour. Taraz.